

Մարինե Գևորգյան
Երևանի պետական համալսարան

Մարդու կենսագործունեության և հասարակական հարաբերությունների մեջ, այլ կենսական բարիքների համեմատությամբ, հողը գրավում է առանձնահատուկ տեղ իր սոցիալական նշանակությամբ, սննդամթերք արտադրելու, բնական ռեսուրս ու անշարժ գույք լինելու հատկությամբ, ինչպես նաև ցանկացած պետության պարենային անվտանգության հիմք ու ազգային հարստություն հանդիսանալով, քանի որ այն տարածք է, որի վրա ապրում է ժողովուրդը:

Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ նախկին տարածքում առաջինն իրականացրեց հողի սեփականաշնորհումը, ընդ որում այն սկսվեց դեռևս ԽՍՀՄ-ի օրոք՝ վերջինիս պաշտոնական լուծարումից մեկ տարի առաջ: Այդ ամենը կատարվեց «Սեփականության մասին» (հոկտեմբեր, 1990) և «Գյուղացիական ու գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքների և ՀՀ հողային օրենսգրքի (հունվար, 1991) ընդունումով ու կիրառումով: Այդ օրենքներում մասնաճանաչվում էր հողային օրենսդրության ընդունման կարևորությունը մասնավոր հողատիրության զարգացման համար, սահմանվում էին գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների գործունեության տնտեսական, կազմակերպչական, սոցիալական պայմաններն ու իրավական հիմքերը:

Հայաստանի Հանրապետությունում հողային վերափոխումները ներառում էին հետևյալ ուղղությունները.

ա. հողի սեփականության նկատմամբ պետական մենիշխանության վերացում և դրա հետ կապված ողջ համակարգի վերափոխում,

բ. հողի սեփականության իրավունքի տրամադրում հանրապետության քաղաքացիներին և նրանց կոլեկտիվներին,

գ. պետության սեփականության իրավունքը պահպանել միայն այն հողերի նկատմամբ, որոնց օգտագործումն ունի համապետական հատուկ նշանակություն,

դ. կարգավորված ֆինանսական ու հարկային համակարգի ձևավորում, որը կհամապատասխանի նորաստեղծ գյուղատնտեսության համակարգին,

ե. գյուղերի աշխատունակ բնակչության զբաղվածության աճի ապահովում և աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործում,

զ. ագրարային հատվածի կառավարման մեխանիզմների կատարելագործում,

է. ագրարային շուկայի ձևավորում և զարգացում,

ը. հողի շուկայի ձևավորում և զարգացում և այլն²:

ՀՀ Նախարարների խորհրդի 1991թ. հունվարի 22-ի № 43 որոշմամբ ստեղծվել էր ՀՀ Նախարարների խորհրդի հողային վերափոխման և սեփականաշնորհման պետական հանձնաժողով, որի հիմնական կազմում էին 37 պաշտոնյաներ: Հանձնաժողովի նախագահն էր ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանը, ով ուներ 4 տեղակալ:

Հողային վերափոխումների իրականացման ընթացքում և նույնիսկ դրանից առաջ՝ դեռևս մինչև անկախության հռչակումը, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն իրականացնում էր մի շարք կազմակերպչական միջոցառումներ: Մասնավորապես նշենք, որ 1991թ. հունվարի 22-ի № 43 որոշմամբ հողային բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացն իրականացնելու, մասնագիտական օգնություն, խորհրդատվություն կազմակերպելու և օրենսդրական ակտերը ճիշտ կիրառելու նպատակով նախարար Յու. Ջավադյանի հրամանով յուրաքանչյուր շրջանի համար ստեղծվելու էին բանվորական խմբեր: Նախատեսվում էր ամիսը մեկ անգամ տեղեկացնել նախարարին առանձին շրջաններում հողային վերափոխումների ընթացքի մասին³: Չնայած գործնականում այդ բանվորական խմբերը որևէ դրական փոփոխություն չստացրին հողի սեփականաշնորհման գործընթացում և չէին էլ կարող որևէ բան փոխել, սակայն նախարարության մեկնաբանությամբ, դրանց գործունեության նպատակն էր. «...հողային բարեփոխումների և սեփականաշնորհման ակտերի գործընթացը լուսաբանելը, բնակչության լայն զանգվածներին մասնագիտական օգնություն կազմակերպելը և անհրաժեշտ բացատրական աշխատանք ծավալելը»: Նման գործունեության կազմակերպումը, կարծում ենք, միայն ձևական

¹ Տե՛ս Հայաստանի գործող օրենքների ժողովածու, 1990-1995, Եր., 1995, էջ 80-106:

² Տե՛ս Григорян В., Администрация земли в Республике Армения, www.ict.ru

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 123, գ. 77, զ. 2, ք. 52-54:

բնույթ էր կրում, քանի որ սեփականաշնորհման ընթացքում տեղ գտած անարդարությունները չէին մեկնաբանվում:

1991թ. հողի սեփականաշնորհումը ՀՀ-ում իրականացվեց՝ ելնելով հետևյալ սկզբունքներից.

1. հողը բաժանվեց գյուղի մշտական բնակիչներին՝ ելնելով առկա ընտանիքների քանակից և գյուղի հողային ռեսուրսներից: Այստեղ նկատենք, որ խոսքը մշակելի հողատարածությունների մասին է, հետևաբար պարզ է դառնում, որ մեկ հողաբաժնի չափը յուրաքանչյուր գյուղի համար տարբեր մեծություն կարող էր ունենալ: Հայաստանի յուրաքանչյուր գյուղական ընտանիք սեփականաշնորհման արդյունքում ստացավ միջին հաշվով 1,5 հեկտար գյուղատնտեսական հողատարածք, այդ թվում՝ 1,1 հեկտար վարելահող:

2. Հողամասերի բաժանումը կատարվեց վիճակահանության սկզբունքով՝ ելնելով յուրաքանչյուր ընտանիքում ընդգրկված ծիւրերի քանակից: Ցանկության դեպքում մի քանի ընտանիք կարող էին հող ստանալ միևնույն դաշտից, որը հետագայում կոլեկտիվներ նրանց համատեղ աշխատանքների կազմակերպումը:

3. Հողը տրվեց գյուղացուն վճարովի, փոխհատուցումը սահմանվեց երկու տարում, այսպես կոչված կադաստրային գուտ եկամտի 70%-ի չափով, որը հաշվարկված էր ըստ հողերի տեսակների (ռոտզելի, անջրդի, այգի և այլն):

4. Գյուղատնտեսական մշակովի հողերի 20%-ը միջին հաշվով չսեփականաշնորհվեց՝ նկատի ունենալով գյուղի հետագա զարգացումը: Այդ տարածքները կարող էին տրվել վարձակալությամբ օգտագործելու կամ այլ հանրային կարիքների համար: Շուկայական հարաբերությունների պայմաններում այդ հողերի արդյունավետ օգտագործումը պահանջում էր աճուրդային սկզբունքով դրանց վարձակալում:

5. Նոր օրենսդրությունը թույլատրում է սեփականաշնորհված հողի ազատ տնօրինում նրա տիրոջ կողմից, այդ թվում՝ օտարում, վաճառք, ժառանգելու իրավունք, վարձակալությամբ տալ կամ վերցնել, օրինական այլ գործարքներ կատարել, որոնք նախկինում արգելված էին⁴:

Վերջապես, օրենքով նախատեսվում է տեղական իշխանության կողմից հողը հետ վերցնելու իրավունք, հատկապես այն դեպքում, երբ մի քանի տարվա ընթացքում այն չի օգտագործվում, կամ նրա տերը չի

վճարում օրենքով սահմանված հողային հարկը⁵: Այս կապակցությամբ նշենք, որ իրականում այս դրույթը չի գործում, քանի որ գյուղացիների մեծ մասն անվճարունակ է, չի վճարում հարկը:

Հողի սեփականաշնորհման ընթացքում տեղ են գտել թերություններ և կոպիտ սխալներ, մասնավորապես.

1. մեր երկրում հողի սեփականաշնորհումը կատարվել է ոչ թե գյուղացիների պահանջով, այլ իշխանության բարձրագույն մարմինների որոշումներով, ընդ որում բոլոր վայրերում այն կատարվել է միևնույն ձևով՝ առանց հաշվի առնելու տարբեր գոտիների առանձնահատկությունները:

2. Սեփականաշնորհման գործընթացում համաժողովրդական և կոլտնտեսային ունեցվածքը չնչին գներով հաճախ անցնում էր այն մարդկանց ձեռքը, որոնք քիչ կամ էլ ընդհանրապես մասնակցություն չեն ունեցել դրանց ստեղծմանը: Դա ըստ էության «նումենկլատուրային» սեփականաշնորհում էր:

3. Մյուս թերությունը հողակտորների մանրացումն էր: Նկատի ունենալով, որ ՀՀ-ում յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության բաժին է հասնում միջին հաշվով երեք հողակտոր, փաստորեն ներկայումս գյուղատնտեսությունն իրականացվում է ավելի քան 1 մլն փոքր հողակտորների վրա: Նման փոքր, կտրտված հողակտորներով հնարավոր չէր կազմակերպել արդյունավետ արտադրություն: Նման պայմաններում առաջատար տեխնոլոգիաների կիրառումը, աշխատանքների մեքենայացումը գրեթե անհնար էին: Արտադրված գյուղմթերքների գրեթե 30%-ն իրացվում էր ապրանքափոխանակության կարգով: Հայաստանի Հանրապետությունում կոլեկտիվի անդամները նախընտրում էին ընտանեկան տնտեսավարման ձևը: Առաջին տարում հողատարածք ստանալով՝ գյուղացիությունը ոգևորվեց, բայց հետագայում հանդիպելով մեծ դժվարությունների՝ հրաժարվեց մշակել հողային շատ տարածքներ: Դրա պատճառները շատ էին, մասնավորապես գյուղացին մեն-մենակ էր գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման դժվարությունների առաջ, դրան ավելացրած նաև հողակտորների միջև առկա հեռավորությունը:

⁴ Տե՛ս Մանասթրյան Ն., Ագրարային հարցը երեկ և այսօր, Եր., 2005, էջ 98:

⁵ Տե՛ս ՀՀ օրենքը հողահարկի մասին, 27.04.1994, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.):

4. Հանրապետության կոմերցիոն բանկերի մեծ մասը ռեսուրսների բացակայության պատճառով գյուղացիական տնտեսություններին վարկեր չէին տրամադրել:

5. Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ներդրումներն ու դրանց դիմաց մթերքների ստացումը տարածամանակյա բնույթ ունեին, կտրված էին միմյանցից: Ծախսերը կատարվում են ամբողջ տարվա ընթացքում, մինչդեռ մթերքների մեծ մասը ստացվում էր տարեկան մեկ անգամ: Աշխատանքի տեխնիկական զինվածության շատ ցածր մակարդակ ունեցող հայ գյուղացու արտադրողականությունը և եկամուտները մեծ տատանումներ ունեին, որոնք պայմանավորված էին նաև բնակլիմայական ամենամյա փոփոխություններով: Թվում էր, թե հողի սեփականաշնորհումից հետո գյուղմթերքի արտադրությունը կավելանա, սակայն ստացվեց հակառակը: Որպես օրինակ նշենք, որ 1987թ. արտադրվել է 285 հազար տոննա հացահատիկ, իսկ 1999թ.՝ 258 հազար⁶:

6. Առավելապես փախստականներով բնակեցված բնակավայրերում տարբեր ձևերով նրանք օտարվեցին սեփականաշնորհման գործընթացից: Ըստ փախստականների՝ հարաբերականորեն արդար էր կատարվել հողերի սեփականաշնորհումը: Հողը մշակելու դժվարությունները, անջրդի և չպարարտացվող հողից սպասվող խիստ սակավ արդյունքը, հարկերի վճարման անհրաժեշտությունը փախստականներին դնում էին հողից հրաժարվելու դժվարության առջև: Այսպես, տարբեր պատճառներով հողից հրաժարվել էին Վարդենիսի Ծափաթաղ գյուղում 50 մարդ, Մեծ Մասրիկում՝ 20 մարդ, Մողղում՝ 120 ընտանիք (առկա 420-ից) և այլն⁷: Որոշ ընտանիքներ հողից հրաժարվում էին ընտանեկան նպաստ ստանալու ակնկալիքով: Ավելի լավ էր տարեկան 60-80 հազար դրամ ընտանեկան նպաստ ստանալ, քան 1 հեկտար հողից, լավագույն դեպքում՝ 10-12 ցենտներ հացահատիկ, որի դրամային արժեքը, ծախսերը հանելուց հետո, նույնն էր, կամ՝ ավելի պակաս: Սրան զուգահեռ լայնորեն տարածված էր հողը վարձակալությամբ տալու սովորույթը: Հողը վարձակալությամբ տալիս էին հիմնականում մշակելու նյութական և ֆիզիկական կարողություն չունեցող փախստականները և տալիս էին գլխավորապես հենց գյուղապետներին կամ տեխնիկա ունեցողներին:

⁶ Տե՛ս Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Եր., 2003, էջ 99:

⁷ Աղբատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000, էջ 15:

Այս հիմնախնդիրների և տնտեսավարման նոր պայմաններում գյուղացիության ակտիվության ու աջակցության միջոցով պարենային և այլ խնդիրներ լուծելու համար 1996թ. ապրիլին ստեղծվեց Ագրոգյուղացիական միությունը: Չնայած նրա ձեռնարկած միջոցառումներին՝ այնուամենայնիվ գյուղատնտեսության զարգացման մեջ տնտեսական մեծ առաջխաղացում տեղի չունեցավ: Ըստ էության, հողերի սեփականաշնորհման ընձեռած հնարավորություններն ամբողջովին չօգտագործվեցին՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման բնագավառում սեփականաշնորհման ուշացմամբ և սպասարկող ենթակառուցվածքների դանդաղ ձևավորմամբ: Ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիներից մեկն էլ գյուղացիական տնտեսությունների մենաշնորհն էր՝ սեփականության և տնտեսավարման տարբեր ձևերի իրական համակարգերի ստեղծմամբ: Կոլեկտիվ և պետական տնտեսությունների մենաշնորհը (65-70%) փոխարինվել էր ավելի հստակ ու խիստ արտահայտված գյուղացիական տնտեսությունների մենաշնորհով (92,5 %)⁸:

2000թ. դրությամբ ստեղծված չէին նաև փոխշահավետ ու կարգավորված հարաբերություններ արտադրողների և մթերող ու վերամշակող ձեռնարկությունների միջև, որը հանգեցրել էր մթերումների ծավալի կրճատման: Հողի սեփականաշնորհման հետ անմիջականորեն կապված էին նաև կոլեկտիվ ու պետական տնտեսությունների լուծարումն ու մասնավոր տնտեսություններին անցնելու գործընթացը: «Գյուղացիական ու գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքով 1991-1992թթ. լուծարվեցին հանրապետությունում եղած մոտ 900 կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները: Կոլեկտիվ և պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների համատարած լուծարման հետևանքով սկզբնական շրջանում ստեղծվեցին 148262 գյուղացիական և 24204 գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ (հունիս, 1991թ.)⁹:

Գյուղացիական տնտեսությունների թիվը հետագայում անընդհատ աճում էր և 2000թ. հասել էր ավելի քան 332 հազարի¹⁰:

Վերափոխումների առաջին ամիսներին (1991թ. հուլիսի դրությամբ) գյուղացիական տնտեսություններին հատկացվեց 180589 հեկ-

⁸ Տե՛ս «Էկոնոմիկա», № 1-3, 1996, էջ 33:

⁹ Տե՛ս Ֆահրադյան Հ., Ագրարային արմատական վերակառուցումներ Հայաստանի Հանրապետությունում. անհրաժեշտություն, արդյունքներ, հիմնախնդիրներ, Եր., 2003, էջ 140:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 141:

տար գյուղատնտեսական հողատեսք (առանց արոտավայրերի), այդ թվում՝ 120339 հեկտար վարելահող, 33989 հեկտար բազմամյա տնկարկ: Գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին այդ նույն ժամանակահատվածում հատկացվեց 140576 հեկտար գյուղատնտեսական հողատեսք, այդ թվում 99247 հեկտարը՝ վարելահող, 7696 հեկտարը՝ բազմամյա տնկարկ:

Հանրապետության հողային ֆոնդի բաշխվածության տվյալները, ըստ հողօգտագործողների, բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

h	Հողերի կատեգորիաները ըստ հողօգտագործողների	1993թ.		1994թ.		1995թ.	
		Ընդհանուր տարածքը (հ.հեկ.)	Տեսակարար կշիռը (տոկոսով)	Ընդհանուր տարածքը (հ.հեկ.)	Տեսակարար կշիռը (տոկոսով)	Ընդհանուր տարածքը (հ.հեկ.)	Տեսակարար կշիռը (տոկոսով)
	Գյուղատնտեսական նշանակության հողեր	2350,5	79,0	2340,7	78,7	2338,0	78,6
	Անտառային ֆոնդի հողեր	434,1	14,6	443,3	14,9	445,9	15,0
	Ջրային ֆոնդի հողեր	16,7	0,5	16,7	0,5	16,7	0,5
	Բնակավայրերի հողեր	65,1	2,2	65,2	2,2	65,5	2,2
	Արդյունաբերության, տրանսպորտի, այլ ոչ գյուղատնտ. հողեր	97,4	3,3	97,8	3,3	97,6	3,3
	Բնապահպան, հանգստավայրային, պատմամշակութային հողեր	10,5	0,4	10,6	0,4	10,6	0,4
	Ընդամենը	2974,3	100	2974,3	100	2974,3	100

Ինչպես կարելի է եզրակացնել աղյուսակի տվյալներից, հանրապետության տարածքում հիմնական հողօգտագործողը գյուղատնտեսությունն է, որի ոլորտում է հողային տարածքի շուրջ 80 տոկոսը: Իրենց տեսակարար կշիռը գյուղատնտեսությանը հաջորդում են անտառային ֆոնդի հողերը, այնուհետև՝ արդյունաբերության, տրանսպորտի և այլ ոչ գյուղատնտեսական հողեր, ապա բնակավայրերի,

ջրային տնտեսության, բնապահպան, առողջապահագոտավայրային և պատմամշակութային հողերը: Ինչ վերաբերում է 1993, 1994, 1995թթ. տվյալների համեմատությանը, ապա նշենք, որ քիչ թե շատ նկատելի փոփոխությունները տեղի են ունեցել գյուղատնտեսական հողօգտագործման ոլորտում: Ընդ որում, գյուղատնտեսական ոլորտից պակասել է շուրջ 12,5 հազար հեկտար տարածք, որը հիմնականում անցել է անտառային ֆոնդին:

1997թ. ՀՀ պետվիճվարչության կողմից ուսումնասիրված 3400 գյուղացիական տնտեսությունների 48%-ը ուներ մինչև 1 հա հող, 28 %-ը՝ 1-2 հա¹¹: Այսպիսով, գյուղացիական տնտեսությունների 3/4-ից ավելին ունեին 2 հա-ից պակաս հող, որը տրոհված էր 2-3 տարբեր հողակտորների: Դրանք մեծ մասամբ գաճաճ, դժվար մշակվող հողեր էին: Այս պարագայում, անշուշտ, հողերի արդյունավետության տարբերությունը մեծ էր: Օրինակ, առաջին խմբի հողերի 0,5 հա-ից ստացված արտադրանքը 20 անգամ գերազանցում էր երկրորդ խմբի հողերի արտադրանքը¹²:

Պետական գյուղատնտեսական ձեռնարկությունները և 1996-1997 թթ. դեռևս գոյությունը պահպանած մի քանի կոլտնտեսություններ, գյուղատնտեսական հողօգտագործման մեջ զբաղեցնելով 2-3 տոկոսը, չունեին որևէ շոշափելի նշանակություն: Հանրապետության հողօգտագործման մեջ նոր երևույթ էր «պահուստային հողեր» հասկացությունը: Մրանք նախկին կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների ապապետականացված, սակայն դեռևս չսեփականաշնորհված հողերն էին, որոնք գտնվում էին իշխանության տեղական մարմինների իրավասության ներքո:

Կոլտնտեսությունների լուծարման և ունեցվածքի սեփականաշնորհման ժամանակ անտեսվեցին օրինականությունն ու սոցիալական արդարության սկզբունքները: Կոլտնտեսության ունեցվածքը, բացի հողից, պատկանում էր կոլտնտեսականներին՝ փայտատերերին: Ուրեմն դրանց լուծարման ժամանակ ունեցվածքի բաշխման և օգտագործման կարգը պետք է որոշեր կոլտնտեսության ընդհանուր ժողովը: Իշխանության բարձրագույն մարմինների որոշմամբ նախկին կոլտնտեսությունների ունեցվածքի մի մասը նույն գնով վաճառվեց թե՛ կոլտնտե-

¹¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1997թ. հունվար-մարտին, էջ 15,16,63,64:

¹² Տե՛ս նույն տեղում:

սականներին, թե՛ նրանց, ովքեր շատ քիչ բան էին արել կամ բոլորովին չէին մասնակցել կոլտնտեսության աշխատանքներին: Մտացված գումարի մի մասն էլ վերցրեց կառավարությունը՝ հետագայում, իբր, գյուղատնտեսության զարգացման նպատակով օգտագործելու համար, այսինքն՝ «փայլը չվերադարձվեց փայատիրոջը»: Բացահայտորեն ունահարվեց սոցիալական արդարությունը: Դրա հետևանքով ունեցվածքի մի մասը յուրացրին պատահական մարդիկ:

Գյուղացիական տնտեսությունների միջև մեծ հեռավորության պատճառով մեծապես ընկավ աշխատանքային, հողային, ջրային և նյութական մյուս միջոցների օգտագործման, գյուղատնտեսական վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը, նվազեցին հողերի բերրիության վերականգնման ու բազմապատկման, աճեցրած բերքի փոխադրման, պահպանման և իրացման տնտեսական հնարավորությունները: Հետագա տարիներին պետությունը հարկադրված քայլեր ձեռնարկեց գյուղացիական ու գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների հոգսերը թեթևացնելու ուղղությամբ:

Հողի սեփականաշնորհման արդյունքում թույլ տրված սխալներն ու բացթողումները 1991-2000թթ. մեր հանրապետությունում, ըստ էության, առաջ են բերել բազմաթիվ խնդիրներ: Այսպես, օրինակ.

ա. սեփականաշնորհումից հետո արդյունավետ հողօգտագործման գործընթացն ընթանում է անբավարար, նույնիսկ ներկայումս, կարծում ենք, այն կարիք ունի զգալի բարեփոխումների,

բ. չափազանց կարևոր խնդիր է հողի օբյեկտիվ գնահատումը դրա հետ կապված՝ հողօգտագործման կարգավորումը,

գ. ՀՀ-ում լուրջ հիմնախնդիր է նաև ոչ միայն եղած հողերի արդյունավետ օգտագործումը, այլև նոր հողերի յուրացումը, որը պետք է կառավարության ուշադրության կենտրոնում լիներ, քանի որ նպատակամետ աշխատանքի արդյունքում հնարավոր կլիներ հանրապետությունում ընդլայնել վարելահողերի տարածքը:

Հողի սեփականաշնորհման ընթացքում և դրա հետևանքով առաջացած այս հիմնախնդիրների, ինչպես նաև հողօգտագործման բարելավման գործընթացում առաջարկում ենք մի շարք միջոցառումներ ձեռնարկել, մասնավորապես.

1. մշակել հողի շուկայի ձևավորման, հողային հարաբերությունների զարգացման, կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացմանը նպաստող պետական և մասնավոր ծրագրեր,

2. մշակել հողի սեփականաշնորհման պայմաններում գյուղատնտեսական հողատեսքերը տեխնածին աղտոտումից, բնական աղետներից պաշտպանելու հիմնական սկզբունքները՝ հաշվի առնելով նշված ոլորտում համաշխարհային փորձը,

3. ստեղծել և ներդնել հողի գնագոյացման, ֆինանսավարկային հարաբերությունների, հողի ու ջրի վարձի գերադասելի համակարգեր,

4. բարելավել գյուղացիական տնտեսությունների սոցիալ-տնտեսական պայմանները, ինչը, կարծում ենք, թույլ կտա ավելի արդյունավետ օգտագործել հողը հատկապես մեքենայական մշակման դեպքում:

Ամփոփելով նշենք, որ վերոհիշյալ առաջարկությունների և դրված խնդիրների լուծման ուղղությամբ կատարվող այլ միջոցառումների իրականացման գործընթացում որպես կարճաժամկետ խնդիր պետք է դիտարկել հողօգտագործման արդյունավետության բարելավումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հողի սեփականաշնորհումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է շատ կարճ ժամանակահատվածում՝ 1991 - 1993թթ., ինչի պատճառով իշխանությունները բավարար ժամանակ չեն ունեցել պատրաստելու համապատասխան զարգացած իրավապայմանագրային դաշտ, որը նպատակաուղղված լիներ սեփականացման իրավունքի ամրապնդմանը, հողի ռացիոնալ օգտագործմանը և այլն: Որպես հետևանք՝ ՀՀ գյուղատնտեսությունը բաժանվեց մի շարք շատ փոքր անհատական տնտեսությունների, որոնք չկարողացան զարգանալ: Հողի սեփականաշնորհման ազդեցությունը դրական էր միայն այն իմաստով, որ օգնեց հաղթահարել զանգվածային աղքատությունը գյուղական վայրերում, սակայն գյուղատնտեսական արտադրության բարձրացման, գյուղատնտեսական արտադրանքի վաճառքի բարելավման համար պետությունը պետք է իրականացներ հետագա վերափոխումներ: Մակայն այս ոլորտում բացթողումները շատ են եղել:

Բանալի բառեր. հողի սեփականաշնորհում, գյուղատնտեսական արտադրություն, տնտեսական վերափոխումներ:

**ПРИВАТИЗАЦИЯ ЗЕМЛИ В РА
В ПЕРИОД 1991-1993 ГГ**

Марина Геворкян
Ереванский Государственный Университет

РЕЗЮМЕ

Приватизация земли в РА была осуществлена в очень короткий период времени – в 1991 – 1993 гг., что и послужило причиной того, что власти не успели подготовить соответственное развитие правовое поле, направленное на закрепление права на приватизацию, рациональное использование земли и так далее. В результате сельское хозяйство РА развилось на множество мелких индивидуальных хозяйств, которые не развивались. Влияние приватизации земли было положительным только в том смысле, что оно способствовало преодолению массовой бедности в сельской местности, однако, для сельскохозяйственного производства, для повышения продуктивности сбыта сельхозпродукции, государство должно было осуществить последующие преобразования. Однако в этой области было много упущений.

Ключевые слова: приватизация земли, сельскохозяйственное производство, экономические реформы.

LAND PRIVATIZATION IN RA DURING 1991-1993

Marina Gevorkyan
Yerevan State University

SUMMARY

In the Republic of Armenia the land privatization was carried out in a very short period; from 1991 to 1993 which was the reason for authorities not manage to develop an appropriate legislative framework aimed at the confirmation of land ownership, the rational use of land and so on. As a result, the agriculture in Armenia was partitioned into many small individual farms which remained undeveloped. The impact of land privatization was positive only in the sense that contributed to the reduction of mass poverty in rural areas, but for increasing the efficiency of agricultural production and sales of agricultural products the state should conduct further reforms. However, the drawbacks were quite a lot in that field.

Key words: land privatization, agricultural production, economical reforms.

**ԱՐԱՄ ՍԱԹՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

Աննա Ասատրյան
*Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն*

Անկախության տարիներին սկիզբ առավ ու շարունակվում է Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ (2013-ից), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2011), կոմպոզիտոր Արամ Սաթյանի (ծնվ. 1947) և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի համագործակցությունը: Դրա առաջին կարևոր ու հիմնարար արդյունքը ՀՀ ԳԱԱ հիմնն էր¹, որը ստեղծվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրինության խնդրանքով 2013-ին: Երաժշտության հեղինակը Ա.Սաթյանն է, իսկ բանաստեղծական տեքստի հեղինակը Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, բանաստեղծ Կարո Վարդանյանը: Հիմնի պրեմիերան տեղի ունեցավ 2013թ. հոկտեմբերի 15-ին Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին նվիրված հոբելյանական հանդեսի ժամանակ: Կատարեցին Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը և Հայաստանի երիտասարդական պետական նվագախումբը՝ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Հիմնն արժանացավ խստապահանջ ու նրբաճաշակ ունկնդիրների ջերմ ընդունելությանը:

Ամիսներ անց Արվեստի ինստիտուտի գիտական անձնակազմի՝ 2014թ. փետրվարի 5-ի ժողովի որոշմամբ Ա.Սաթյանն ընտրվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ:

Արամ Սաթյանի գործունեությունը ՀՀ անկախության շրջանում ծավալվել է երեք հիմնական ուղղություններով՝ ստեղծագործական, մանկավարժական և կազմակերպական:

¹ Տե՛ս Ասատրյան Աննա, ՀՀ ԳԱԱ հիմնը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014, N 1, էջ 253-260: